ԵՐՐՈՐԴ ԶԱՅՆ.– Մորթին է պատռում:

ՉՈՐՐՈՐԴ ԶԱՅՆ.– Վեր բերէք չպատռի:

ԹԱՄԱԴԱ.– Մի պատռի թող յիշատակ մնա:

ԲՈԼՈՐԸ.– (Նազարին) Վե՛ր արի, Քա՛ջ Նազար, բաւական է:

(Վայր են բերում վագրի մէջքից։)

ԹԱՄԱԴԱ.– Վագրը մաշկեցէք: Ի՞նչ անճարակն էք: Էդ է՞լ Նազարն անի:

Մի քանիսը վագրը քաշում են դէպի խորքը՝ մաշկելու։

ՆԱԶԱՐ.– (Ուշքի գալով) Ո՞ւր է վագրը:

ԲՈԼՈՐԸ.– Սպանեցինք:

ՆԱԶԱՐ.– (Նայելով վագրին հազում է ինքն իրեն) Հա՛, հը՛մ… Է՛սպէս էր եղել բանը… (Վագրին դիմելով) Լաւ պրծար էս մի անգամն էլ: (Բարձր հազալով, գիւղացիներին) Բա էս անելո՞ւ բան էր, որ արիք:

ԲՈԼՈՐԸ.– (Շփոթուած) Ի՞նչ կա:

ՆԱԶԱՐ.– Ի՞նչի սպանեցիք, ո՞վ էր ասում սպանեք:

ԲՈԼՈՐԸ.– Բա չսպանէի՞նք:

ՆԱԶԱՐ.– Ես չէի՞ կարող սպանել: Ափսո՛ս: Հազիւ մի ձի արել, նստել քշում էի: Վագրին էլ մարդ ձեռ տա՞: Անվնաս անասուն:

ԲՈԼՈՐԸ.– Չէինք իմանում, էս մեկը բաշխի, էլ չենք անի:

ՍԱՔՈ.– (Զախից ներս պրծնելով) Ո՞ւր է, ի՞նչ վագր է, ասում են վագր է եղել:

ԲՈԼՈՐԸ.– Ուշացա՛ր: Քաջ Նազարն սպանեց:

ՍԱՔՈ.– (Մեծաբերան) Զարդուխուրդ կանենք, հա՛… ապա ի՞նչ գիտէք…

ՎԱԳՐ-ՄԱՇԿՈՂՆԵՐ.– (Ձեռների վրայ պարզած առաջ են բերում մորթին) Այ հա՛յ…

ԹԱՄԱԴԱ.– Բերէք, փռէք Քաջ Նազարի ոտքի տակ, (Փռում են։) Ապրես, Քաջ Նազար, մեր տէր, մեր փրկիչ: Էսպէս էլ աշխարհքը գցես ոտիդ տակ: (Գիւղացիներին) Դէ, հիմի վեր կացէք, գնանք Նազարի հետ, ջարդենք հսկաներին:

ԲՈԼՈՐԸ.– Գալիս ենք:

ՎԱՐԺԱՊԵՏ.– Ելէ՛ք:

ՏԷՐՏԷՐ.– Ե՛լ ժողովուրդ:

ՎԱՐԺԱՊԵՏ.– Օ՛վ ազգ ամենայն, գնանք Քաջ Նազարի հետեւից, փրկուենք եւ ճաճանչաւորուե՛նք հայրենեաց փառքով:

ՏԷՐՏԷՐ.– Եւ կամքն աստուծո օրհնեա՛լ եղիցի: